ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուղատնտեսության ոլորտում համայնքի հողերը ոռոգելու նպատակով ձեռք է բերվել երկու պոմպ:

Սոցիալական պաշտպանության ոլորտում զոհված ազատամարտիկի ծնողի, Արցախյան պատերազմի հաշմանդամի ծնողի, համայնքի մահացած բնակիչների ընտանիքների անդամների և համայնքի սոցիալապես քսաներկու անապահով բնակիչների հատկացվել են դրամական օգնություններ:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ոլորտում խճապատվել և հարթեցվել են համայնքի և դաշտամիջյան փողոցները:

Ձեռք է բերվել ելքի և մուտքի <<Լուսագյուղ>> ցուցանակներ: Տեղադրվել է համայնքի մկզբնամասում և վերջնամասում:

Կրթության ոլորտում «Լուսագյուղի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ԻՆ հատկացվել է դրամաշնորհ, դաստիարակի և 7-րդ դասարանի ուսուցիչների աշխատավարձերը վճարելու համար:

Ճանապարհային տրանսպորտի ոլորտում ասֆալտապատվել է համայնքի կենտրոնական ճանապարհը համայնքի և ՀՀ կառավարության միջոցներով: Ասֆալտապատման աշխատանքների 60 %-ը ֆինանսավորվել է համայնքի բյուջեից, իսկ 40%-ը՝ պետական բյուջեից:

Մշակույթի ոլորտում կազմակերպվել են միջոցառումներ <<Գիտելիքի, գրի և դպրության>>, <<Նոր տարվա>> օրերի առթիվ: Տրվել են նվերներ առաջինից չորրորդ դասարանի աշակերտներին և մինչև հինգ տարեկան երեխաներին:

Կազմակերպվել են միջոցառումներ ապրիլի 24-ի՝ եղեռնի օրվա և մայիսի 9-ի հաղթանակի օրվա առթիվ:

Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում, համայնքի բնակեցված փողոցներից, շաբաթական մեկ անգամ կատարվել է կենցաղային աղբի հավաքում և տեղափոխում:

2018 թվականի ընթացքում հրավիրվել և անցկացվել է 12 ավագանու նիստ:

Ընդունվել է համայնքի ղեկավարի 33 որոշում, արձակվել՝ 26 կարգադրություն:

Արձակվել է աշխատակազմի քարտուղարի 49 հրաման:

Տրվել է 230 տեղեկանք համայնքի բնակիչներին:

Համայնքապետարան մուտք է եղել 274, ելք է եղել 234 գրություն:

2018թ. Լուսագյուղ համայնքի վարչական բյուջեով հաստատվել են տարեկան եկամուտներ, ընդամենը 27272.4 հազ. դրամ, որից՝

ա / հողի հարկ՝	3417.0 հազ. դրամ,
բ / գույքահարկ՝ ընդամենը	2336.5 հազ. դրամ,
որից՝ շինության գույքահարկը՝	324.3 հազ. դրամ,
փոխադրամիջոցների գույքահարկը՝	2012.2 հազ. դրամ,
գ / վարձակալական հողի հարկ՝	213.4 հազ. դրամ,
դ / դոտացիա	19885.5 հազ. դրամ,
ե / տեղական տուրք՝	460.0 հազ. դրամ,
զ/ աղբահանության վճար՝	960.0 հազ. դրամ:

2018թ. Լուսագյուղ համայնքի ֆոնդային բյուջեով հաստատվել են տարեկան եկամուտներ, **ընդամենը 34770.2 հազ. դրամ,** որն առաջացել է
տարեսկզբի ազատ մնացորդից՝ 19188.2հազ. դրամ,
համայնքի սեփ. հանդիսացող հողի օտարումից՝ 2640.0հազ.դրամ,
պետական. բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանս. նպատակային հատկացումներից՝ (սուբվենցիա) 12942.0հազ.դրամ

2018 թվականին վարչական բյուջեի տարեկան եկամուտները հաստատվել և կատարվել են հետևյալ չափերով,
ընդամենը՝ հաստատվել է 27272.4հազ. դրամ,
կատարվել է 26011.9 հազ. դրամ կամ 95.4%-ով, որից՝

1. հողի հարկը հաստատվել է 3417.0 հազ. դրամ՝
   կատարվել է 2691.8 հազ. դրամ կամ 78.8%,
1. շինության գույքահարկը հատատվել է 324.3 հազ. դրամ՝
   կատարվել է 294.6 հազ. դրամ կամ 90.9 %,
3. մեքենաների գույքահարկը հաստատվել է 2012.2 հազ. դրամ՝
   կատարվել է 2393.0 հազ. դրամ կամ 118.9 %,
4. վարձակալ. հողի հարկը հաստատվել է 213.4հազ. դրամ՝
   կատարվել է 155.6 հազ. դրամ կամ 72.9%,
5. դոտացիան հաստատվել է 19885.5 հազ. դրամ՝
   կատարվել է 19885.5 հազ. դրամ կամ 100%,

6. տեղական տուրքեր հաստատվել է 460.0 հազ. դրամ՝
   կատարվել է 460.0 հազ. դրամ կամ 100%,
7. այլ ոչ հարկային եկամուտների պլան չի հաստատվել,
   կատարվել է 90.0 հազ. դրամ,
8. աղբահանության վճարը հաստատվել է 960.0 հազ. դրամ,
   կատարվել է 41.3 հազ. դրամ կամ 4.3 %:

2018 թվականին ֆոնդային բյուջեի մուտք է եղել 36903.9 հազ. դրամ,

որից՝ 4773.7 հազ. դրամ՝ հողի օտարումից մուտքեր,
12942.0 հազ.դրամ պետական. բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանս. նպատակային հատկացումներ՝ (սուբվենցիա) ,
19188.2հազ. դրամ, տարեսկզբի ազատ մնացորդ:

2018թ. սեփական եկամուտները հաստատվել են տարեկան 7386.9 հազ. դրամ: կատարվել է 6126.43 հազ. դրամ, կամ 82.9 %:

2018թ. կատարվել են հետևյալ ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ **ընդամենը 53245.9 հազ. դրամ, որից՝ վարչական բյուջե՝ 18930.5 հազ. դրամ, ֆոնդային բյուջե՝ 34315.4 հազ.դրամ:**

1.աշխատավարձ՝/4111 հոդված/	12071.9 հազ.դրամ,
2.պարգևատրում՝ /4112 հոդված/	215.5 հազ.դրամ,
3. էներգետիկ ծառայություն/՝4212հոդված/	764.0 հազ.դրամ,
4. կոմունալ ծառայութ. / 4213 հոդված/	960.0 հազ.դրամ,
5. կապի ծառայություն/ 4214 հոդված/	174.0 հազ.դրամ,
6. ապահովագրական ծախսեր՝/ 4215 հոդված/	28.0 հազ.դրամ
7. ներքին գործուղում /4221հոդված/ .	40.0 հազ.դրամ,
8. համակարգչային ծառայութ.՝/4232 հոդված/	100.8 հազ.դրամ,
9. տեղեկատվական ծառայութ./ 4234 հոդված/	48.0 հազ.դրամ,

10.ներկայացուցչական ծախս./ 4237 հոդված/ 498.5 հազ.դրամ,
11 ընդհանուր բնույթի ծառայ. / 4239 հոդված/ 165.0 հազ.դրամ,
12. շենք.և կառ.ընթ. նորոգում՝ / 4251 հոդված/ 630.0 հազ.դրամ,
13. մեք. և սարք. ընթ. նորոգում՝ / 4252հոդված/ 114.0 հազ.դրամ,
14. .գրասենյակային նյութեր՝ /4261հոդված/ 100.0 հազ.դրամ,
15. տրանսպորտային նյութեր՝ /4264հոդված/ 480.0 հազ.դրամ,
16. հատուկ նպատ. այլ նյութեր՝ /4269հոդված/ 137.3 հազ.դրամ,
17.ընթացիկ դրամաշնորհներ՝ / 4637հոդված/ 810.0 հազ.դրամ,
18.այլ նպաստներ՝ / 4729հոդված/ 1425.0 հազ.դրամ,
19. պարտադիր վճարներ՝ / 4823հոդված/ 18.4 հազ.դրամ,
20.մասնագիտական ծառայ.՝ / 4241հոդված/ 150.0 հազ. դրամ,
21. շենք.և կառ.կապ.. նորոգում՝ / 5113 հոդված/ 32935.0 հազ.դրամ,
22.վարչական սարքավորում.՝ / 5122 հոդված/ 385.4 հազ.դրամ,
23. նախագծահետազ. ծախսեր՝ / 5134 հոդված/ 995.0 հազ.դրամ:

2019 թվականին Լուսագյուղ համայնքում դեռևս մնում են չլուծված հետևյալ խնդիրները.

1. Կառուցել նոր դպրոց,
2. Կառուցել երկու ոռոգման պոմպակայան,
3. Գործարկել մանկապարտեզը:

Լուսագյուղ համայնքի ղեկավար՝ Ս. Կարապետյան